# ՀՀ Արմավիրի մարզպետարանի միջազգային կապերի 2012թ. տարեկան ծրագրի կատարողական

| h/h | Աշխատանքի ուղղությունը | Միջոցառման անվանումը | | Միջոցառումների ժամկետները | | Աշխատանքի կատարման արդյունքները |
|---|---|---|---|---|---|---|
| | | նախատեսված | չնախա-տեսված, սակայն փաստացի կատարված | նախատեսված | փաստացի | |
| | 1 | **2ա** | **2բ** | 3ա | **3բ** | 4 |
| 1 | **Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերով՝ մարզպետարանի իրավասության ոլորտներին վերաբերող դրույթների և /կամ այլ փաստաթղթերի կատարում/** | | | | | |
| 1.1 | **Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև կնքված միջազգային պայմանագրերի շրջանակներում** | ՀՀ Արմավիրի մարզ է այցելել ՌԴ Մոսկվայի մարզի կառավարության արտաքին տնտեսական կապերի նախարարության արտաքին տնտեսական համագործակցության վարչության պետ Յուլիա Ռուդիխը և մարզի Մետիշինսկի շրջանի ղեկավարի առաջին տեղակալ Անդրեյ Զուրակովը: | | 2012թ. ապրիլ | | Մոսկվայի մարզի պատվիրակները Արմավիր քաղաքի թիվ 5 հիմնական դպրոցի ռուսական ուսուցմամբ դասարաններին նվիրաբերել են տարբեր առարկաների համար նախատեսված ուսումնական գրականություն և դիտակտիկ նյութեր: |
| 1.2. | | Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանն ընդունել է Հայ-Ռուսական միջտարածաշրջանային համագործակցության երկրորդ համաժողովի շրջանակներում Հայաստան ժամանած ՌԴ Սվերդլովսկ նահանգի փոխվարչապետ Վլադիմիր Վլասովին և Յարոսլավլի նահանգապետարանի աշխատակազմի արձանագրային վաչության պետ Յուլյա | | 2012թ. հոկտեմբերի 12 | | Քննարկվել են Արմավիրի մարզի և ՌԴ Սվերդլովսկի և Յարոսլավլի նահանգների միջև վերջին տարիներին ձևավորված փոխհարաբերություններին և դրանց ընդլայնման հնարավորություններին՝ վերաբերող հարցեր: Այդի շրջանակներում մարզպետը ստացել է հրավերք՝ ՌԴ Սվերդլովսկի և Յարոսլավլի նահանգներ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | **Օտարերկրյա պետությունների տարածքային միավորների հետ համաձայնագրի կամ այլ փաստաթղթերի /ծրագրերի կնքում և կատարում/** | | | | | |
| 2.1. | **Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգի հետ կնքված փոխըմբռնման հուշագիր** | 25.06.2009թ. կնքված համագործակցության վերաբերյալ փոխըմբռման հուշագրի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգի պատվիրակությանը, որը գլխավորում էր նահանգապետարանի տնտեսական հարցերի գերտեսուչ Իբադուլահ Աբբարիին: | | 2012թ. հունիս-հուլիս | 2012թ. հունիսի 21 | Քննարկվել են գյուղատնտեսության բնագավառում, մասնավորապես՝ անասնապահության, թռչնաբուծության, այգեգործության, պտղի և բանջարեղենի վերամշակման ոլորտներում փոխգործակցության հարցեր: Կողմերը պատրաստակամություն են հայտնել ակտիվացնելու համագործակցությունը էկոլոգիայի բնագավառում, առևտրատնտեսական փոխհարաբերություններում: |
| 2.2. | **Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Ատրպատականի նահանգի հետ կնքված փոխըմբռնման հուշագիր** | Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Ատրպատականի նահանգապետ Ալիռեզա Բեյգի գլխավորած պատվիրակության այցը Արմավիրի մարզ: | | | 2012թ. հուլիսի 10 | ՀՀ Արմավիրի մարզի և ԻԻՀ Արևելյան Ատրպատականի նահանգի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր, որի կատարումն ապահովելու և երկկողմ համագործակցության զարգացման ուղիներն ուսումնասիրելու նպատակով ձևավորվել են հանձնաժողովներ: Փոխըմբռնման հուշագրով նախատեսվում է համագործակցություն սկսել գյուղատնտեսության, արդյունաբերության, մշակույթի և սպորտի բնագավառներում, ինչպես նաև հետամուտ լինել համապատասխան գերատեսչությունների կողմից Թեհրան-Երևան և հակառակ ուղղությամբ օդային հաղորդակցության հետ կապված հարցի լուծմանը: Կողմերը պատրաստակամություն են հայտնել ակտիվացնելու համագործակցությունը էկոլոգիայի բնագավառում, առևտրատնտեսական փոխհարաբերություններում: Փոխ-գործակցության արդյունքում արդեն իսկ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2.3. | | 10.07.2012թ. կնքված համագործակցության վերաբերյալ փոխըմբռման հուշագրի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Ատրպատականի նահանգի պատվիրակությանը, որը գլխավորում էր Փալիբար քաղաքի ղեկավար Աբդուլահ Աղարփուրը: | | | 2012թ. սեպտեմբերի 26 | Կողմերի միջև նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել արոտավայրերի վարձակալման, կաթնամթերքի արտադրության ու արտահանման, ինչպես նաև սպանդանոցների կառուցման հետ կապված: Պատվիրակության կազմում գտնվող Արևելյան Ատրպատական նահանգի պետական և մասնավոր հատվածի պատասխանատուները ցանկություն են հայտնել համագործակցել անասնաբուժության ոլորտում և |
| 2.4. | | ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանի գլխավորած պատվիրակության այցը Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Ազարբայջանի նահանգ: | | | 2012թ. նոյեմբերի 27-28 | Այցի շրջանակում պատվիրակությունը եղել է Ջուլֆա գավառի «Արազ» առևտրատնտեսական ազատ գոտում, որտեղ քննարկվել են ազատ տնտեսական գոտու հետ համագործակցության հեռանկարներին առնչվող հարցեր: Պատվիրակությունն այցելել է նաև տրակտորների արտադրությամբ զբաղվող գործարան, եղել է պանրի |
| 2.5. | **Յարոսլավլի մարզի և ՀՀ Արմավիրի մարզի միջև կնքված համաձայնագիր** | Յարոսլավի մարզի կառավարության և ՀՀ Արմավիրի մարզպետարանի միջև 2008 թ. նոյեմբերին կնքված առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության համաձայնագրի շրջանակներում աշխատանքների | | | 2012թ. սեպտեմբերի 1-10 | Արմավիրի քաղաքի թիվ 5 հիմնական դպրոցին փոխանցվել է 500 հազ. ռուբլի՝ համակարգչային տեխնիկա ձեռք բերելու համար: |
| 2.6. | **Մոսկվայի մարզի հետ** | Մոսկվայի մարզի կառավարության և ՀՀ կառավարության միջև կնքված համաձայնագրի շրջանակներում աշխատանքների շարունակում: | | | 2012թ. սեպտեմբեր | Մոսկվայի մարզի գործարարների կողմից Արմավիրի քաղաքի թիվ 5 հիմնական դպրոցին տրամադրվել է 10 նոթբուքեր և ինտերակտիվ գրատախտակ: Միաժամանակ մարզի ղեկավարության կողմից շուրջ 300 հազ. ռուբլի արժողությամբ գրականություն է տրամադրվել Արմավիրի քաղաքի թիվ 5 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2.7. | **Սլովակիայի Հանրապետության Տռնավայի երկրամասի և ՀՀ Արմավիրի մարզի միջև համագործակցություն** | 24.04.2009թ. կնքված առևտրատնտեսական և գիտատեխնիկական մշակութային համագործակցության համաձայնագրի շրջանակներում 2012թ. կնքվել է նախնական պայմանագիր: | | | 2012թ. նոյեմբեր 14-18 | Պայմանագրով նախատեվել է Արմավիրի մարզ ներկրել 5,0մլն. եվրո արժողությամբ տրակտորներ: Հարցը ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը: |
| 2.8. | **Գերմանիայի Դաշնության Իդշտայն քաղաքի և ՀՀ Արմավիրի մարզի միջև համագործակցություն** | 2011թ. ձեռք բերված համագործակցության շարունակում: | | | 2012թ. հուլիս | Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ <<Արմավիրի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ին բուժսարքավորումների տրամադրման շուրջ՝ նվիրատվության տեսքով: |
| 3 | **Աշխատանքային ուսուցողական ճանաչողական այցեր օտարերկրյա պետությունների տարածքային միավորներ և միջազգային կազմակերպություններ, մարզ այցելող օտարերկրյա պետությունների տարածքային միավորների, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ընդունում և ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացում** | | | | | |
| 3.1. | **Արմավիրի մարզի և Ավստրիայի հայ առաքելական եկեղեցու հետ համագործակցություն** | Մարզպետ Ա.Ղահրամանյանն ընդունել է Ավստրիայի հայ առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ տեր Անդրեաս քահանա Իսախանյանին: | | | 2012թ. օգոստոսի 22 | Մարզպետ Ա. Ղահրամանյանը Ավստրիայի հայ համայնքում գործող Հովհաննես Շիրազ շաբաթօրյա դպրոցին նվիրել է շուրջ 300 կտոր գիրք (I-IV դասարանների 20-ական, իսկ V և ավելի բարձր՝ 5-ական կամ 10-ական օրինակ): |
| 3.2. | **ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանի գլխավորած պատվիրակության այցը Ռուսաստանի Դնության Չեբոքսարի և Սարանսկ քաղաքներ** | Հանդիպում գյուղատնտեսական տեխնիկայի արտադրության ոլորտում հայտնի գործարանների հետ: | | | 2012թ. հոկտեմբերի 15-18 | Ծանոթացում «Ագրոմաշ» կոնցեռնի և նրա բազմաթիվ մասնաճյուղերի արտադրական գործունեությանը: «Ագրոմաշ» կոնցեռնի հետ կնքվել է նախնական պայմանագիր՝ Արմավիրի մեխանիկական գործարանի բազայի հիման վրա բազմաֆունկցիոնալ 30ՏԿ և 60ՏԿ մակնիշի և 30-65 ձիաուժ հզորությամբ տրակտորների հավաքումը կազմակերպելու նպատակով: Նույն կազմակերպության հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ «Չետռա» մակնիշի բազմաֆունկցիոնալ կոմունալ-շինարարական նպատակներով օգտագործվող մեքենա-տեխնիկայի արտադրության կազմակերպման կամ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 3.3 | **Արմավիրի մարզի Էջմիածին և Բուլղարիայի Վելիկո Տրնովո քաղաքների միջև համագործակցություն** | Արմավիրի մարզի համայնքների և օտարերկրյա պետությունների տարածքային միավորների միջև նոր կապերի ստեղծում և ընդլայնում: | | | 2012թ. հոկտեմբերի 10-14 | Էջմիածին և Բուլղարիայի Վելիկո Տրնովո քաղաքները ստորագրել են քույր քաղաքներ դառնալու վերաբերյալ հայտարարությունը՝ մշակույթի, զբոսաշրջության և հանրային կյանքի այլ բնագավառներում համագործակցելու նպատակով: |
| 4 | **Բազմակողմ և այլ միջոցառումներ** | | | | | |
| 4.1. | **Հոլանդական «Յան վան Ինգեն», «Դելտաֆլորա» և «Մուբետեք» ընկերությունների տնօրենների այցը Արմավիրի մարզ** | ՀՀ Արմավիրի մարզպետ Ա.Ղահրամանյանի հետ հետագա փոխհամագործակցության հարցերի քննարկում: | | | 2012թ. մարտի 28 | Պտղի մշակությամբ, բանջար-բոստանային մշակաբույսերի ու ծաղկի սերմերի արտադրությամբ և ջերմոցային տնտեսությունների հիմնմամբ զբաղվող հոլանդական ընկերությունների տնօրենները ներկայացրել են իրենց ծրագրերը: Քննարկվել են մարզում փորձնական ներդրումներ իրականացնելուն վերաբերող հարցեր: Մարզպետը պատրաստակամություն է հայտնել աջակցություն ցուցաբերել նախատեսվող |
| 4.2. | **Եվրոպական հանձնաժողովի գլխավոր տնօրինության ինստիտուցիոնալ կառույցի ղեկավար Ադրիանո Զիլիանյի հրավերք** | Բրյուսելում Գյուղատնտեսության և գյուղական զարգացման քաղաքականության ավագ պաշտոնյաների համար կազմակերպված համաժողովին մասնակցություն: | | | 2012թ. մայիսի 30-ից հունիսի 2-ը | Քննարկել են Եվրոպայի հարևանության քաղաքականության (ԵՀՔ ) երկրներում գյուղատնտեսության բնագավառի արդիականացման խնդիրները: |
| 4.3. | **«Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական երկրորդ փառատոնի անցկացում** | Փառատոնի շրջանակներում <<Ռուսաստանի հայերի միության>> ՀԿ, <<Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոն>> ՀԿ, <<Русский мир>> հիմնադրամի, ՀՀ ԿԳ, ՀՀ Մշակույթի և սպորտի նախարարությունների աջակցությամբ Արմավիրի մարզի դպրոցներում անցկացվել են ռուսական մշակույթի և ռուսաց լեզվի օրեր, կազմակերպվել են ռուսական արվեստի երեկոներ, երգի | | | 2012թ. | Շահագրգիռ կողմերի և Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի այցը Արմավիրի մարզ: Արմավիր քաղաքի թիվ 5 հիմնական դպրոցում կազմակերպված միջոցառմանը մասնակցել են նաև Նորավան և Էջմիածնի տարածաշրջանի Հովտամեջ համայնքների միջնակարգ դպրոցները: Արմավիր քաղաքի թիվ 5 հիմնական դպրոցին նվիրաբերվել են համակարգիչներ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 4.4. | **ՀՀ Արմավիրի մարզի և մարզում ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների միջև համագործակցության շարունակում** | Համագործակցության շարունակում Հայաստանի Մանուկներ հիմնադրամի (COAF) հետ: | | | 2012թ. | 2012թ. մարզում իրականացվել է Քարակերտի թիվ 1 միջն. դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ, Լեռնագոգ համայնքում բացվել է ստեղծագործարան- դասարան, ինչպես նաև տարբեր ոլորտային զարգացման ծրագրեր Բաղրամյանի տարածաշրջանի |
| | | Համագործակցության շարունակում «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության հետ: | | | 2012թ. | «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության համաֆինանսավորմամբ իրականացվել են Ծիածան համայնքում մշակույթի տան գրադարանի և գրապահոցի, մշակույթի տան տանիքի վերանորոգման և խաղահրապարակի կառուցման, Լուկաշին համայնքնում մանկապարտեզի բակի վերանորոգման, ջրահորերում ջրաբաքերի տեղադրման և այգու կանաչապատման, |